

«ՄԵԾ ՀՆԳՅԱԿ» ՀԱՅԱԼԵԶՈՒ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐՑԱՐԱՆԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՈՒՄԸ

Սերոբյան Ա. Կ. (ԵՊՀ, Երևան, ՀՀ)

astghiks@ysu.am

Անձնային գծերը, մասնավորապես՝ Մեծ հնգյակը չափող հարցարանները թարգմանվել ու տեղայնացվել են շատ լեզուներով (օրինակ՝ ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլն) և լայնորեն կիրառվում են անձի հոգեբանության ոլորտում հետազոտություններ կատարելու համար: Հայալեզու հարցարանների պակասը անհրաժեշտություն առաջացրեց տեղայնացնելու Մեծ Հնգյակ հարցարանը: Հոդվածում ներկայացված են «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի տեղայնացման փուլերից ներքին հուսալիության ստուգումը Կրոնբախի ալֆայի միջոցով և արտաքին հուսալիության ստուգումը թեստ-ռեթեստային մեթոդի միջոցով: Հետազոտությունից ստացված արդյունքները ցույց են տալիս, որ Կրոնբախի ալֆան, ինչպես նաև թեստ-ռեթեստային ցուցանիշը բոլոր հինգ գործոնների համար բավականին բարձր է ստացվում, որպեսզի հարցարանը համարվի հուսալի:

Հանգուցային բառեր: անձնային գծեր, Մեծ հնգյակ, հարցարանի տեղայնացում, ներքին հուսալիություն, թեստ, ռեթեստ:

Հայ իրականությունում հոգեբանական հետազոտություններում նկատվում է հայերենով թարգմանված և տեղայնացված մեթոդիկաների, մասնավորապես թեստերի ու հարցարանների պակաս: Հիմնականում հետազոտողները իրենց աշխատանքներում օգտագործում են ռուսերենից կամ անգլերենից բառացի թարգմանած թեստերը, որոնք չեն անցել տեղայնացման համար անհրաժեշտ բոլոր փուլերը: Տեղայնացման գործընթացը կարևոր է նրանով, որ բառացի թարգմանությունը ոչ միշտ է արտահայտում նույն իմաստը, ինչ բնօրինակը: Բացի դրանից կան պնդումների կամ հարցերի ընկալման մշակութային տարբերություններ, որը նույնպես կարող է ազդել հետազոտական արդյունքների վրա, եթե մեթոդիկան պատշաճ կերպով տեղայնացված չէ: Հոգեբանական մեթոդիկաների, մասնավորապես հարցարանների ու թեստերի տեղայնացումը կարելի է բնութագրել մի քանի փուլերով, այն է՝ թարգմանություն բնօրինակի լեզվից, հարցարանի հուսալիության և վալիդության ստուգում, ստանդարտների մշակում [1]:

Հայերենով տեղայնացված մեթոդիկաների բաց կա նաև անձնային գծերի չափման ոլորտում: Հոդվածում ներկայացված է անձնային գծերը նկարագրող ժամանակակից ամենահայտնի տեսական մոտեցումներից՝ «Մեծ հնգյակի»

հիման վրա ստեղծված հայալեզու անձնային հարցարանի մշակման փուլերից թարգմանության և հուսալիության ստուգման գործընթացները:

Անձնային գծերը և դրանց դասակարգման մոտեցումները: Անձի հոգեբանության տեսական մոտեցումներից յուրաքանչյուրը մարդուն նկարագրում է իր դրսևորման տարբեր մակարդակներում (կենսաբանական, անձնային գծերի, հոգեդինամիկ, դրդապատճառային, հումանիստական և այլն) [10]: «...Անձի հոգեբանության մոտեցումներից անձնային գծերի կամ դիսպոզիցիոնալ մոտեցումն ուսումնասիրում է անձնային կայուն բնութագրերը և վարքային միտումները, որոնցով մարդիկ միմյանց նման են կամ տարբերվում են իրարից...» [10, էջ 58-59]: Այս հարցով զբաղվող հետազոտողների խնդիրն է գտնել ամենակարևոր, կայուն և ինչու չէ համընդհանուր գծերը՝ փորձելով պատասխանել հետևյալ երկու հարցերին.

Որո՞նք են մարդուն նկարագրող հիմնական հոգեբանական որակները

Ինչպե՞ս կարելի է լավագույնս ուսումնասիրել և նկարագրել այդ որակների մարդկանց միջև եղած տարբերությունները:

Վերը թվարկված հարցերի տեսական ու հետազոտական պատասխանները նպաստում են նրան, որ հնարավոր է դառնում չափել, նկարագրել, դասակարգել ու վերլուծել անձնային գծերը: Այս ոլորտում աշխատանքների մեծ մասը հիմնված է այն ենթադրության վրա, որ անձը նկարագրող կարևոր հատկությունները ներառում են մեծ, սակայն սահմանափակ քանակությամբ գծեր: Դիսպոզիցիոն տեսության ներկայացուցիչները կարծում են, որ «...գծերը անձնային տարբերություններ են, որոնք կայուն են տարբեր իրավիճակներում և ժամանակի ընթացքում...» [10, էջ 60-61]: Բացի դրանից համարվում է, որ անձնային գծերը չափելի են և ունեն դրսևորման տարբեր աստիճան, այսինքն՝ ինչ-որ մի գիծ մեկի մոտ կարող է վառ արտահայտված լինել, իսկ մյուսի մոտ՝ քիչ: Հիմնվելով այս ենթադրության վրա փորձեր են արվում ստեղծելու գծերի դասակարգման մի ընդհանուր համակարգ [10]: Նման համակարգի ստեղծման մեկնակետ է վերցվել անձի այն բնութագրիչները, որոնք օգտագործվում են բնական կամ առօրյա լեզվում: Մոտեցման հիմնական սկզբունքն այն է, որ հետազոտողները բառարաններից դուրս են բերել անձը նկարագրող բոլոր ածականները, որոնք հետագայում ենթարկվել են վերլուծության [4]: Գ. Օլպորտը և Հ. Օդբերտը (1936) առաջիններից էին, ովքեր սկսեցին ածականների դուրսբերումը անգլերեն բառարաններից: Նրանց աշխատանքները հետագայում շարունակեց և մշակեց Ու. Նորմանը (1967)՝ փորձելով բնութագրիչների որչափությունը բաժանել խմբերի [2, 5]: Սակայն ինչպես Օլպորտի և Օդբերտի, այնպես էլ Նորմանի դասակարգումների խնդիրն այն էր, որ առանձնացված խմբերը իրար նման էին և ունեին համընկման ընդհանուր եզրեր: Հետազոտողների մի մասը դա համարեց անընդունելի և փորձեց գտնել անձնային գծերի դասակարգման այլ տարբերակներ: Ռ. Քեթելը (1943) օգտագործեց Օլպորտի և Օդբերտի ցուցակը

որպես մեկնարկային կետ անձի բազմաչափ կառուցվածքի նկարագրման համար [2, 5]: Սակայն Քեթթեյի առաջարկած մոդելը բավականին լայն էր ու ընդգրկում էր 16 գործոններ: Սա էր պատճառը, որ հետագայում գիտնականները փորձեցին ստեղծել անձի մեկ այլ մոդել, որը կներառեր ավելի քիչ փոփոխականներ: Առաջինը Դ. Ֆիսկեն էր (1949), ով առաջարկեց Քեթթեյի մոդելի ավելի սեղմ տարբերակը: Նրա կողմից առաջարկված փոփոխականները, որոնք դուրս էին բերվել ինքնագնահատման և այլ մարդկանց գնահատման միջոցով, հիմք հանդիսացան հինգգործոնային մոդելի ստեղծման համար: Առաջին անգամ հինգգործոնային մոդելը նկարագրվեց 1960-ականներին [2]: Հետևելով նախորդ հեղինակներին, հատկապես Գ. Օլյորտին, Ռ. Քեթթեյին, Ռ. Նորմանին՝ Գոլդբերգը որպես անձնային գծի էմպիրիկ ապացույց օգտագործեց ածականների շարքեր՝ ենթադրելով, որ լեզուն է մարդու անձնային բնութագրիչների կրողը [4]: Անձի կառուցվածքի ուսումնասիրման այս մոտեցումը հայտնի է որպես հոգելեզվաբանական [4]: Հիմնվելով հոգելեզվաբանական մոտեցման և գործոնային վերլուծության մեթոդի վրա հետազոտողները եզրակացրին, որ անձը կարելի է նկարագրել հինգ հիմնական գծերի միջոցով: Այդ հինգ գծերից յուրաքանչյուրը ներկայացնում է անձի մեկ կարևորագույն կողմ, որը դրսևորվում է նրա գործունեության մեջ և մարդկանց հետ շփման ընթացքում [2]: «Մեծ Հնգյակ» անվանումն առաջին անգամ հանդիպում է հենց Գոլդբերգի աշխատանքներում [4]: «...Հինգգործոնային մոդելը դիտարկվում է որպես անհատի հուզական, կոգնիտիվ, դրդապատճառային բազային ռճերի, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների կառուցման անհատական ռճերի ուսումնասիրման գործիք...» [10, էջ 58-59]: Այդ հինգ գործոններն են՝ Նեյրոտիզմ (անգլ.՝ Neurotism), Էքստրավերտություն (անգլ.՝ Extraversion), Լայնխոսություն (Բացություն փորձին) (անգլ.՝ Openness), Բարյացկամություն (անգլ.՝ Agreeableness), Բարեխղճություն (անգլ.՝ Conscientiousness): Այս գծերը կայուն են ժամանակի մեջ, անկախ են իրավիճակից և դրանց միջոցով հնարավոր է համակողմանի նկարագրել մարդուն [6, 7, 8]:

Նեյրոտիզմը չափում է հուզական կայունությունը, բնութագրում է բացասական հույզեր ունենալու հակվածությունը: Նեյրոտիզմի բարձր ցուցանիշներով մարդիկ հակված են սթրեսների, անհանգիստ են, տագնապային, հաճախակի են ունենում բացասական հույզեր: Ցածր ցուցանիշով մարդիկ հուզականորեն կայուն են, հանգիստ, դիմացկուն, ինքնագոհ, վստահ [3, 10]:

Էքստրավերտությունը բնութագրում է արտաքին աշխարհի հետ հարաբերություններում ներգրավվածության աստիճանը: Էքստրավերտները սիրում են լինել մարդկանց միջավայրում, լի են էներգիայով, շփվող են, եռանդուն, ակտիվ, զվարճասեր, լավատես: Գործոնի արտահայտվածության ցածր ցուցանիշով մարդիկ մեկուսացած են, զուսպ, ամաչկոտ, օտարված [3, 10]:

Լայնախոհություն (Բացություն փորձին) չափում է ճանաչողական ոլորտի անհատական առանձնահատկությունները, բնութագրում է մտածողության ոճը՝ տարբերակելով վառ երևակայություն ունեցող, կրեատիվ մարդկանց ավելի պրագմատիկ, պահպանողական մտածող մարդկանցից: Լայնախոհ, բաց մարդիկ ունեն ճանաչողական/ինտելեկտուալ հետաքրքրասիրություն, սիրում են արվեստը և անտարբեր չեն գեղեցիկի նկատմամբ: Գործոնի ցածր միավորներով անձանց բնութագրիչներից են պրակտիկությունը, ավանդականությունը, միօրինակություն նախընտրելը [3, 10]:

Բարյացկամություն գործոնը չափում է մյուս մարդկանց հետ հարաբերությունների որակը կարեկցանքից մինչև թշնամություն, ցույց է տալիս համագործակցության և համերաշխության անհատական տարբերությունները: Բարյացկամ անհատները վստահող են, ապրումակցող, զիջող, բարեսիրտ, աջակցող, մեծահոգի: Այս գործոնի ցածր ցուցանիշներ ունեցող մարդիկ, իրենց շահերը վեր են դասում մյուսների հետ հարմարվելու անհրաժեշտությունից, համագործակցող չեն, կոպիտ են հարաբերություններում, դժվարությամբ են ապրումակցում ուրիշներին [3, 10]:

Բարեխղճություն գործոնը չափում է նպատակադրված վարքում անհատական առանձնահատկությունները, ցույց է տալիս գործելուց առաջ հետագա հետևանքների մասին մտածելու ունակությունը: Բարեխղճության արտահայտվածության բարձր աստիճան ունեցող անձինք կազմակերպված են, կարգապահ, ճշտակատար, ինքնավերահսկող, մանրախնդիր, համառ: Իսկ արտահայտվածության ցածր ցուցանիշով մարդիկ անփույթ են, ինքնաբերական կազմակերպ, իմպուլսիվ [3, 10]:

Անձնային գծերը և դրանց չափման ձեռքը: Անձնային գծերի ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների ընդլայնմանը զուգահեռ անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու մի այնպիսի գործիք, որով հնարավոր կլիներ չափել անձնային գործոնները՝ հիմք դնելով անձնային գծերի ուսումնասիրման հարցարանային մոտեցմանը [5, 9]: Անձնային գծերը չափող գործիքներից ամենահայտնիներից է Փ. Կոստայի և Ռ. Նորմանի առաջարկած NEO PI, որը առաջին անգամ տպագրվել է 1985թ.-ին և չափում էր միայն երեք գործոնները՝ Նեյրոտիզմ, էքստրավերտություն և Լայնախոհություն [5]: Հետագայում հեղինակները վերանայել են հարցարանը ավելացնելով նաև Բարյացկամություն և Բարեխղճություն գործոնները: Նոր հարցարանը կոչվեց NEO PI-R [9]: Այն թարգմանվել է տարբեր լեզուներով և տեղայնացվել տարբեր մշակույթներում: NEO-PI-R բաղկացած է 240 հարցից, սակայն կա նաև կարճ՝ 60 հարցանի տարբերակը: Վերջին ժամանակներում լայնորեն օգտագործվում է նաև BFI-ը, որը բաղկացած է 44 հարցից և չափում է միայն հինգ մեծ գործոնները [5]:

Հողվածում ներկայացված հետազոտության *նպատակն է* ստուգել NEO-PI-R-ի հիման վրա ստեղծված հայկական մշակույթին համապատասխան «Մեծ հնգյակ» անձնային հարցարանի հուսալիությունը: Հարցարանի հուսալիության ստուգումը ենթադրում է հարցարանի ներքին հուսալիության կամ պնդումների ներքին համաձայնվածության ստուգում և հարցարանի կայունության կամ թեստ-ռեթեստային հուսալիության ստուգում:

«Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի մշակումը: Անձնային գծերը չափող հարցարանների տեղայնացման աշխատանքի առաջին փուլերում փորձ է արվել հայերեն լեզվով տեղայնացնել BFI-ը⁶: Առաջին հետազոտությանը մասնակցել են 216 ուսանող (M \bar{x} =19, SD=1,37, կանայք 70,4%): Սկզբում կատարվել է հարցարանի անգլերեն լեզվից թարգմանություն հայերեն և հետթարգմանություն: Հարցարանի ներքին հուսալիությունը ստուգվել է Կրոնբախի ալֆայի միջոցով: Սակայն վերլուծությունից ստացված արդյունքները այդքան էլ գոհացնող չէին, քանի որ ալֆան տատանվում էր 0,039-ից Բարյացկամության համար, 0,413 Էքստրավերտության համար: Մնացած երեք գծերի համար ալֆաները հետևյալն էին՝ 0,103 Բարեխղճության համար, 0,204՝ Նեյրոտիզմի, 0,354՝ Լայնախոհության: Նման արդյունքները չէին կարող հուսալի համարվել, այդ պատճառով որոշ հարցեր վերանայվեցին ու հարցարանի նոր տարբերակը անցկացվեց ևս մեկ անգամ:

Հետազոտության ընտրանքը այս փուլում որոշվեց վերցնել ավելի լայն: Հարցմանը մասնակցում էին ոչ միայն ուսանողներ, այլև տարբեր տարիքի ու մասնագիտության 541 հոգի: Ընտրանքի միջին տարիքը կազմում էր 33,3 (SD=11,6), որոնցից կանայք 44,1%-ն էին: Այս անգամ, իհարկե, հուսալիության արդյունքները շատ ավելի բարձր էին ստացվել, քան նախորդ անգամ: Կրոնբախի ալֆաները Նեյրոտիզմի համար ստացվել էր 0,335, Էքստրավերտության՝ 0,352, Բարյացկամության՝ 0,339, Բարեխղճության՝ 0,416, Լայնախոհության՝ 0,561: Բայց արդյունքները բարձր էին միայն համեմատության մեջ: Դրանք այս անգամ էլ հուսալի համարվել չէին կարող: Այսպիսով՝ ստացված արդյունքների հիման վրա ենթադրվեց, որ հարցարանի մեխանիկական թարգմանությունը բավարար չէ:

Այդ պատճառով որոշվեց ոչ թե վերցնել արդեն եղած մեթոդիկա ու տեղայնացնել, այլ կազմել նոր հարցարան: Նոր հարցարանի համար հիմք հանդիսացավ IPIP-ի (անգլ.՝ International Personality Item Pool) էլեկտրոնային կայքում տեղակայված NEO-PI-R պնդումների բազան⁷ : IPIP անձնային գծերին վերաբերող պնդումների անվճար բազա է, որից կարող են օգտվել բոլոր հետաքրքրված հետազոտողները: Կայքում յուրաքանչյուր անձնային գիծը

⁶ Տեղայնացման գործընթացով զբաղվել է ԵՊՀ «Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիան

⁷ <http://ipip.ori.org/newNEOFacetsKey.htm>

չափվում է մի քանի պնդումներով: Վերջիններս էլ կազմվել են անձնային գծերը չափող հուսալի և վախիդ հարցարանների կետերի հիման վրա: Հետազոտողները կայքի բազան կարող են օգտագործել նոր հարցարաններ կազմելու համար:

IPIP-ի էլեկտրոնային կայքում տեղակայված NEO-PI-R հարցերի բազայում յուրաքանչյուր գործոն ներկայացված է 6 ենթագործոնով, որոնցից յուրաքանչյուրի համար տրված է 10 պնդում՝ 5 ուղիղ պնդումներ են, 5՝ հակառակ: Փորձագետները հարցերի ընտրությունը կատարել են հաշվի առնելով յուրաքանչյուր գծի ու նրան համապատասխան ենթագծերի նկարագրությունը և իմաստի համապատասխանությունը հայկական մտածելակերպին: Արդյունքում յուրաքանչյուր ենթագործոնը չափվում է 5 պնդմամբ, իսկ մեծ գործոնները՝ 30: Ստեղծված նոր հարցարանը բաղկացած է 150 պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի համար մասնակիցը պետք է նշի, թե ինչ չափով է համաձայն պնդման հետ: Համաձայնության աստիճանը չափվում է հինգմիավորանոց սանդղակով, որտեղ մեկ թիվը նշանակում է, որ ընդհանրապես համաձայն չէ, իսկ հինգը՝ միանշանակ համաձայն է:

Հարցմանը մասնակցել են 259 հոգի ՀՀ տարբեր բուհերի ուսանողներ ($M_{տարիք} = 20$, $SD_{տարիք} = 2.29$, կանայք 71%): Արդյունքները հետազայում ենթարկվել են վերլուծության՝ օգտագործելով մաթեմատիկական վիճակագրության մեթոդները: Վերլուծության նախնական փուլում ստուգվել է ստացված հինգ մեծ գործոններից յուրաքանչյուրի բաշխվածությունը համապատասխանում է նորմալ բաշխմանը, թե ոչ: Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Մեծ հնգյակը չափող հարցարանի գործոնների նորմալ բաշխվածության չափանիշները

Գործոնի անվանումը	Միջին արժեք (M)	Ստանդարտ շեղում (St. Dev)	Կոլմոգորով-Սմիրնով Z	Նշ. գործակից (Asymp. sig.)
Նեյրոտիզմ	3.0	0.478	0.626	0.829
Էքստրավերտություն	3.5	0.465	0.855	0.458
Լայնախոհություն	3.5	0.337	0.798	0.548
Բարյացկամություն	3.4	0.385	1.109	0.170
Բարեխղճություն	3.4	0.389	0.654	0.786

Աղյուսակ 1-ում ներկայացված են գործոնների միջին արժեքներն ու ստանդարտ շեղումները, ինչպես նաև Կոլմոգորով-Սմիրնովի Z չափանիշն ու դրա նշանակալիության աստիճանը: Բաշխվածությունը համարվում է նորմալ,

երբ Կոլմոգորով-Սմիրնովի չափանիշի նշանակալիության աստիճանը մեծ է 0,05-ից [1]: Այսինքն, ելնելով աղյուսակի տվյալներից, կարելի է ասել, որ բոլոր հինգ գործոնները բաշխվել են նորմալ: Սա թույլ է տալիս, որ հետազոտության արդյունքները ենթարկվեն հետագա վիճակագրական վերլուծության:

Հարցարանի ներքին համաձայնվածությունը կամ որ նույնն է ներքին հուսալիությունը ստուգելու համար օգտվել ենք Կրոնբախի ալֆայի ցուցանիշից: Այն ցույց է տալիս, թե յուրաքանչյուր պնդում որքանով է համապատասխանում այն սանդղակին, որը չափում է: Իսկ հարցարանի կայունությունը կամ արտաքին հուսալիությունը ստուգվել է թեստ-ռեթեստային մեթոդով: Մեթոդի էությունն այն է, որ հետազոտվողների մի մասը նույն հարցարանը լրացրել են երկու անգամ երկու ամիս ընդմիջմամբ: Ժամանակի նման հատվածն ընտրվել է, քանի որ անձնային գծերը դրանք ժամանակի կարճ հատվածի համար կայուն հատկանիշներ են և երկու ամիսը բավական չէ էական փոփոխություններ կատարվելու համար, սակայն բավարար է որպեսզի հետազոտվողը մոռանա այն պատասխանները, որոնք տվել է նախորդ անգամ [1]: Հետազոտությանը մասնակցել է 69 ուսանող ($M_{տարիք} = 19.8$, $SD_{տարիք} = 1.346$, կանայք 71%):

Կրոնբախի ալֆայի և թեստ-ռեթեստային գործակցի արդյունքները Մեծ հնգյակի յուրաքանչյուր գործոնի համար ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Մեծ հնգյակը չափող հարցարանի գործոնների Կրոնբախի ալֆան և թեստ-ռեթեստային գործակիցը⁸

Գործոնի անվանումը	Կրոնբախի ալֆա (α)	Կրոնբախի ալֆա (թեստ-ռեթեստ) (α)	Կրոնբախի ալֆան ըստ IPIP	Թեստ-ռեթեստային գործակից
Նեյրոտիզմ	0.86	0.88	0.95	0.81
Էքստրավերտություն	0.86	0.82	0.92	0.89
Լայնախոհություն	0.72	0.76	0.92	0.58
Բարյացկամություն	0.79	0.78	0.90	0.75
Բարեխղճություն	0.82	0.78	0.92	0.83

Ինչպես երևում է աղյուսակում ներկայացված տվյալներից Կրոնբախի ալֆան երկու անկախ չափումների արդյունքում բոլոր հինգ գործոնների համար ստացվել է 0,7-ից մեծ թիվը, ինչպես նաև գործակիցները մոտ են IPIP սանդղակների գործակիցներին: Հաշվի առնելով նշված երկու հանգամանքը ստացված արդյունքները կարելի է համարել հուսալի [1]: Ինչ վերաբերում է

⁸ Աղյուսակի 3-րդ սյունակում ներկայացված են թեստ-ռեթեստային գործակիցը որոշելու համար ընտրված հետազոտության մասնակիցների արդյունքների հիման վրա հաշվարկված Կրոնբախի ալֆայի գործակիցը:

թեստ-ռեթեստային կորելյացիոն գործակցին, ապա այս դեպքում արդյունքները համարվում են հուսալի, եթե գործակիցը 0,75-0,8 է և ավելի [1]: Մեծ հնգյակի չորս գործոնները, այն է՝ Նեյրոտիզմը, էքստրավերտությունը, Բարյացկամությունը և Բարեխղճությունը համապատասխանում են այդ չափանիշին, իսկ Լայնախոհության համար գործակիցը ստացվել է մոտավորապես 0,6: Սա նշանակում է, որ սանդղակում կան պնդումներ, որոնք վերանայման կարիք ունեն:

Այսպիսով՝ Մեծ հնգյակը չափող հարցարանը կարող ենք համարել հուսալի և կայուն: Վերը նկարագրված հետազոտությունը արտացոլում է «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի տեղայնացման փուլերից հուսալիության ստուգումը: Հետագայում նախատեսվում է ստուգել նոր հարցարանի վալիդությունը, ինչպես նաև սահմանելու նորմեր անհատական և խմբային դիագնոստիկայում կիրառելու համար:

Գրականություն

1. **Митина О.В.** Разработка и адаптация психологических опросников.- М.: Смысл, 2011:
2. **Ashton M., Lee C.** A theoretical basis for the major dimensions of personality. *European journal of personality*, 15, 2001, pp. 327-353:
3. **Costa P., McCrae R.** The revised NEO personality inventory (NEO-PI-R). *The SAGE Handbook of Personality Theory and Assessment: Volume 2 - Personality Measurement and Testing*. SAGE Publications Inc., 2008. pp. 179-198
4. **Goldberg L.** The development of markers for the Big-Five factor model. *Psychological Assessment* 4 (1), 1992, pp. 26-42:
5. **John O., Srivastava S.** The Big Five trait taxonomy: history, measurement and theoretical perspectives in L. Pervin and O.P. John (eds.), *Handbook of personality: Theory and research* (2nd ed.). New York: Guilford, 1999, pp. 102-138:
6. **McAdams D. P., Pals J. L.** A new Big Five: Fundamental principles for an integrative science of personality. *American psychologist*, 61 (3), 2006, pp. 204-217:
7. **McCrae R., Costa P. Jr.** A five factor theory of personality. In O. John, L. Pervin (Eds.), *Handbook of personality: Theory and research*, 2nd ed. New York, NY: Guilford Press, 1999, pp. 139-153:
8. **McCrae R., Costa P. Jr.** Empirical and theoretical status of the five-factor model of personality traits. In Boyle G., Matthews G. & Saklofske D. (eds) *The SAGE Handbook of Personality Theory and Assessment: Volume 1 — Personality Theories and Models*, SAGE Publications Ltd, 2008, pp. 273-294:

9. McCrae R., John O. An introduction to the Five factor model and its applications. *Journal of personality* 60(2), 1992, pp. 175-215:
10. Mischel W., Shoda Y., Ayduk O. Introduction to personality: Toward an integrative science of the person, 8th ed., Wiley Global Education, 2008:

ПРОВЕРКА НАДЕЖНОСТИ АРМЯНОЯЗЫЧНОГО ЛИЧНОСТНОГО ОПРОСНИКА “БОЛЬШАЯ ПЯТЕРКА”

Серобян А. К. (ЕГУ, Ереван, РА)

Личностные опросники, в частности, опросники Большой Пятерки, переводились и адаптировались на многих языках (например, на русском, немецком, французском и т.д.), а также широко используются в исследованиях личности. На армянском языке практически нет таких адаптированных методик, поэтому возникла потребность создания армяноязычной версии личностного опросника “Большая Пятерка”. В статье представлены результаты измерения интернальной надежности и стабильности опросника Большой Пятерки, соответственно с помощью альфы Кронбаха и тест-ретестовой методики. Результаты исследования показывают, что коэффициенты интернальной и тест-ретестовой надежности для всех пяти шкал получаются достаточно высокими, чтобы опросник считался надежным и стабильным.

Ключевые слова: личностные черты, Большая Пятерка, адаптация опросника, интернальная надежность, тест, ретест, надежность.

RELIABILITY ANALYZES OF THE ARMENIAN “BIG FIVE” QUESTIONNAIRE

Serobyana A.K. (YSU, Yerevan, RA)

Questionnaires studying the Big Five have been translated into many languages (for example, in Russian, German, French, etc.). Their adapted versions are actively used during the studies in the field of personality psychology. There is practically no such adapted methods in Armenian. So there was a need for creating the Armenian “Big Five” questionnaire. The article presents the reliability analyzes (Cronbach’s alpha) and the stability analyzes (test-retest correlation coefficients) of the Armenian “Big Five” questionnaire. The results show that the Cronbach’s alpha and test-retest coefficient for all the five scales has been obtained high enough that the questionnaire will be considered reliable.

Key words: personal traits, Big Five, questionnaire adaptation, reliability analyze, test, retest, analyze.